

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ

Ի ՅՈՒՍԷՓ ԵԻԹՆ ՎԱՅԱՆԳԻ

Ո Ի Թ՝ Վ Ա Հ Ա Ն Գ Ի *

Նոցունց¹ սպասաւորութեանցն մատակարարին եւ տակառապետին, բարկացաւ փարաւոնն ի վերաւ երկոցունցն (ի) յոյժ, եւ բարկութեամբ ցասմամբ հրամանեց արկանել զնոսա² ի րանդն ուր էրն Յովսէփ: Եւ եղեալ նոցանդ աւուրս սակաւ, տեսին երկութեան³ ի միում աւուր երազ, ըստ որում հանդերձեալն էր⁴ վաղվաղակի լինել նոցա, եւ ամենասուրբն Յովսէփ սպասաւորէր նոցա, վասն զի էին պատուականք: Ըստ սովորութեան ի ներքս մտանել Յովսէփա, ետես զնոսա զի էին տրտմեալք եւ երկութիւնն⁵ յոյժ խռովեալք վասն երազոյն, եւ տեսեալ զերկութիւնն⁶ զնոսա Յովսէփա⁷, հարցանէր ուսանել ըզպատճառս տրտմութեան: Իսկ նոքա ասեն նմա, այսաւր երկութիւնն⁸ երազ տեսաք եւ տրտմեալ եմք, վասն զի զտանի որ կարող է մեկնե(ա)լ զերազն ըստ որում տեսաքն: Իսկ նայ ասէ ցնոսա. այդ Աստուծոյ [է] ծանուցանել զերազն երկիրդածաց իւրոց, միանգամայն եւ զմեկնութիւն նոցա, ասացէ իւրաքանչիւր ոք զերազն իւր, զի իմ Աստուածն ինեւ մեկնեցէ զայն: Զայսոսիկ նորա ասացեալ⁹ պատմեցին իւրաքանչիւր զերազն Յովսէփա որպէս եւ տեսին:

Իսկ լուեալ Յովսէփա՝ կարճ րանիւք պատմեաց նոցա զճմարտութիւնն, զհանդերձեալն լինել իւրաքանչիւր ումեք ի թաղաւորէն, ըստ որում աւրինակի եւ եղեւ. զտակառապետն կալ ի նմին կարգի, ըստ առաջին համարձակութեանն, իսկ զմատակարարն ի մահ մատնել եւ թռչնոց երկնից կերակուր լինել: Եւ ծանուցեալ Յովսէփա զհանդերձեալ պատիւն լինել զինապետին, ազաչեց զնա ասելոյ, յիշեցիր¹⁰ եւ զիս առաջի փարաւոնի, զի լիցց աստուստ¹¹, քանզի ոչ ինչ մեղա, եւ ոչ ինչ չար զործեցի թէ անգայց ի տան րանդիս:

Ո՞ր զաւակ ընդիր, ո՞ր ամենեւիմ[ը] երանելիտ, ընդէ՞ր խնդրես աւղանականութիւն ի մահկանացու մարդոյդ, զԱստուած թողեալ եւ զմարդ աղա-

* Ձեռ. Վիեննայի ունի «Եւրոն վախճանի»:

1 Բ. սոցունց

2 Բ. չուր զնոսա

3 Բ. երկութեան

4 Բ. էր նոցա

5 Բ. երկութիւնն

6 Բ. զերկութիւնն

7 Բ. չուր Յովսէփա

8 Բ. երկութիւնն

9 Բ. ասացել

10 Բ. յիշեա

11 Բ. աստի

չես¹², և մանաւանդ զի յոյժ փորձ առեր աւգնականութեանն Աստուծոյ, անհատանելի է ասել, զի այսորիկ¹³ յաղագս կացեր մինչեւ ցայժմ աշնափ ժամանակ, ի յերկուց զերծար, ի զժնդակ թէ՛ն և ի բազում մեքենաւորութեան¹⁴, զոր կոխեցեր զիրարար, զի¹⁵ երկնչիս ի բանդէ, որ ի բորբոքեալ ի բոցոյն անվատթար¹⁶, և անրիժ պահեցեր¹⁶ զպատմութեանն երանելիա, փասն է՞ր նեղասրտեալ¹⁷, զի Ած․ քեզ նախախնամութիւն աննկոյ, թաղաւորութիւն և փառս տա, յորժամ ինքն(ն) կամեացի, որչափ համբերես արդարութեան փորձութեանդ, առաւել ևս պայծառանա յաղթութեան պսակն:

Այլ զի [ը]ցցի երազոցն մեկնութիւնն յերկուսին¹⁸ ի նոսա, որպէս ասացն Յովսէփ¹⁹ զկնի երեց աւուրց, փարաւոն թաղաւոր ուրախութիւն առնէ առատապէս ամենայն ծառայից իւրոց, և յիշեալ միանգամայն ի մէջ ի մահացելոցն, յաղագս տակառապետին, և մատուակին, և վճիռ հատեալ նոցա հրամաէ ի մահ, և կերակուր լինել թոչնոց զմատակարարն, իսկ տակառապետին ի նոյն ի կարգին և ի պատուին¹⁹ կալ, որպէս զառաջինն: Եւ վաղվաղակի մոռացեալ²⁰ տակառապետին յաղագս Սրբոյն Յովսէփա, ոչ ամենեւին յիշեց զնա:

Իսկ յետ երկուց ամաց ըստ նախախնամութեանն Աստուծոյ երազեցան փարաւոնի երազք մեծամեծք, որ անցանէ քան զամենայն խմաստութիւն և զիսպտոսի, միանգամայն ևս քան զկախարդացն այնոքիկ մեկնութիւն և զաւրութիւն մի է որպէս յայտնէ Յովսէփ:

Բայց ինքն փարաւոն զարթուցեալ ի քնոյն, կոչեաց զամենայն իմաստունս և զպէտս, և ասէ ցնոսա զերազն իւր, զի յայտնապէս ընդրութիւն արացեն, և ոչ որ էր յամենայնէ որ կարէր ասել զմեկնութիւն երազոյն փարաւոնի թաղաւորի: Քանզի զերդ²¹ իսկ կարէին որք ի զուժակցութենէ²² զիւսացն պաշարեալք կախարդք և հարցուէք հասանել կամ ասել զանյայտ խորհուրդս երկնաւորին Աստուծոյ, և արարչին սրբոյ: Եւ տեսեալ²³ փարաւոնի զանխմաստութիւն նոցա, ի բազում տրտմութեան եղեալ, և յայնժամ յիշեաց զՅովսէփ տակառապետն, ասէ փարաւոնի զպատահումն բարի յինքեան ի թաղաւորէն, յորժամ վերստին կոչեցաւ, և զերդ²¹ հրամաեցաւ սպանանել մատակարարին, ըստ որում աւրինակի և Յովսէփ երկաքանչիւրոցն մեկնեաց:

Եւ լուեալ փարաւոնի մեծաւ խնդութեամբ և փութով հրամաեաց կոչել²⁴ զնա, և կոչեալ զՅովսէփ ի բանդէն, ասէ փարաւոն առաջի մեծամեծացն իւրոց, ասէ ցնա․ լուս զէն թէ²⁵ այր իմաստուն ևս դու, բաւական մեկնել զանյայտ տեսիլն իմ: Պատասխանի ետ Յովսէփ փարաւոնի թաղաւորին և ասէ, այսպիսի բանս, որ վայել էր Աստուծոյ, են, ասէ, երազք փարաւոնի առաջի Յովսէփա, և առաջի մեծամեծացն, և վաղվաղակի իւրեւ լուս զերազան, զիրարար կրկնեցան ի բերանոյն Յովսէփա, որպէս ի բերանոյն Աստուծոյ, և զարմացեալ փարաւոնի ընդ մանկանն իմաստութիւն և ընդ մեծխրա-

12 Ա. աղայեմ

13 Բ. ալսոսիկ

14 Բ. մեքենաւորութեան

15 Ա. անվատթար

16 Ա. պսակեցար

17 Բ. անգարտիս

18 Բ. յերկուսին

19 Ա. պատուին

20 Բ. մատուցեալ

21 Բ. զի արդ

22 Բ. ի զուժակցութենէ

23 Բ. կր պահի տեսեալ

24 Բ. կոչեաց

25 Բ. երէ

տուժիւն նորա: (Կարկէ) [Կարգեալ]²⁶, առէ, այր խմտտուն [և] զաւրաւոր, որպէս զի ժողովեացէ արմտիս բազում և և զիցի ի պահեստ առ նեղութեան ժամանակն:

Եւ առէ թաղաւորն. զքեզ ինքն, (ն)որ այսպիսի խրատ մատուցեր, կացուցից այսաւ ի վերայ ամենայն Եղիպտոսի, և ի քումէ բերանոյդ առցէ հրաման Եղիպտոս և տուն լոմ: Եւ սղեցոյց նմա բեհեղա և ծիրանիս և ի յիւր ի²⁷ կառսն վերագրեաց զնա և ամենայն մեծամեծքն առաջի և զինի կառուցրն, մանաւանդ յորժամ լուսն ի բերանոյ թաղաւորին զնա լինել երկրորդ թաղաւոր Եղիպտոսի: Եւ տեսալ Պետափրէի որ էարկ զնա ի տուն բանդին զմեծ զարմանան, եթէ զերդ²¹ նստաւ փառաւք Յովսէփ ի կառսն փարաւոնի, երկեաւ մեծապէս. և զաղտարար մեկնեցաւ ի միջոյ մեծամեծացն, ընթանայր զալ ի տունն իւր, և մտեալ ի ներս երկիւղիւ և դողութեամբ երայ ըզթուան իւր և առէ ցկինն: Եթէ զիտէիւր կին զաւթէ զինչ եղև այսաւ նրա մեծ և զարմանալի, բայց մեզ է ահ մեծ: Յովսէփն այն ծառայն մեր, տէր մեր է այսաւ և ամենայն Եղիպտոսի, և ահա փառաւք ի կառսն փարաւոնի նստի իբրեւ զթաղաւոր պատուեալ յամենեցունց, և իմ ոչ զաւրեալ յերկիւղէն և ի զոգմանէն երեւել Յովսէփա զաղտարար զնացի:

Չայտոսիկ լուեալ կնոջն Պետափրէի քաջալերէր զնա ասելոյ. Այսպէս յայտնի արարից քեզ այսաւ զմեզսն իմ ըստ որում եսն զործեցի, քանզի ես ի յայնժամ անշափարար սիրեցի զամենաբարին Յովսէփ, զպարկեշտն զայն, և ժամու ժամու բազում շողաբորթան(ան)աք, և պահութեամբ զարանակալ լինելոյ սղուշութեամբ, որպէս զի կարացից լինել ընդ նմա, և ի վայելունչ զեղոյ նորա առնուլ, և ամենեւին ոչ զաւրել հանդիպել կամացս, քանզի և ոչ բանիս արժանացոյց զիս լինել կամաց, այլ բունել իմ²⁸ բռնաբար և զնա հաւանեցուցանել ինձ, փոքր մին արտաքս փախեաւ, յորում և ես քեզ ցուցի զհանդերձս նորա, և եմ յանդիմանութեամբ բուռն հարել զնմանէն, և ի ձեռաց իմոց փախուցեալ եթող յիս զհանդերձսն²⁹ իւր: Ահաւայտիկ ես եմ պատճառք³⁰ թաղաւորութեան և մեծ փառաց նորա, զի թէ ոչ էր իմ³¹ այսպէս հարեալ³² ի Յովսէփ, ոչ էր նորա ընդեցեալ ի տուն բանդին, այլ շնորհս և պատիւ պարտէ ինձ արկանել եղելոյս պատճառք փառացն նորա: Արդարեւ յոյժ սուրբ է Յովսէփ, զի զբրպարտեալ³³ ոչ ումեք յայտնեց, արի զնայ այսուհետեւ ուրախութեամբ, և երկիր պաղ ընդ (մեծա)մեծամեծսն: Եւ յարուցեալ Պետափրէս զնաց պատկառանաւք երկիր պաղանել Յովսէփա, ընդ ամենայն մեծամեծսրն:

Եւ ի միջի այսր ամենայնի կոտորեցաւ և թնւ լիութեանն այնորիկ, և ունի սոյ ի բոլոր ի Քանան, և փտանդէր Յակոբ հանդերձ որդոյքն իւրոյք:

Յայնժամ լուեալ Յակոբրա եթէ յերկրին Եղիպտացուց զտանին արմտիք բազում առատութեամբ, առէ ամենեցուն որդոց իւրոց, ահաւայտիկ ի Եղիպտոս ցորեան բազում է, և կայք երթայք զնեցէք և մեզ, զի մի ի սովուս մեղուք ամենիքին³⁴: Եւ առեալ պատուէր տասն որդոցն Յակոբրա, իջանէին

26 Բ, կարկէ, ապա որբադրած է՝ կարգեալ

27 Բ, չունի ի, ի

28 Բ, եմ

29 Բ, զհանդերձս

30 Բ, պատճառ

31 Բ, ոչ իմ էր

32 Բ, յարել

33 Բ, զպարտեալ

34 Բ, ամենեւին

ամենեքին դնել կերակուր :

Եւ իբրեւ ետես Յովսէփ զիւր եղբարսն, ծանեալ զամենեւեան, բայց նոքա ոչ խմացան : Եւ ասէ սաստելով. տասն արքս ախոբիկ չարի դիտաւորք եկին յերկիրս Եգիպտացոց, կայաբուք³⁵ զգոսա, եւ կապեացուք սպուշու թեամբ, քանդի լրտեսել³⁶ ի յերկիրս³⁷ եկին այսր :

Իսկ նոքա տեսեալ ի զողման եղեալ եւ ասեն երկիւղիւ. Քաւ լիցի տէր մեր, ոչ եմք լրտեսք, այլ ամենեքին մեք եղբարք եմք Համանծունք, որդիք սիրելիք հաւր միոյ³⁸ արգարոյ, երբեմն թուով երկոտաւանք էաք, եւ մինն ի չար³⁹ զազանէ սպանաւ, ամենեւին լաւ⁴⁰ յոյժ սիրեցել հաւր խրոյ, եւ սղա դնա հայրն մինչեւ ցայժմ : Իսկ միւս եղբայրն ընդ հաւր մերում է ի Քանան, մխիթարութիւն նմա :

Եւ առեալ զՍիմոն կապեաց դնա, վասն զի ես, ասէ, յԱստուծոյ երկն- չիմ եւ սղաշամ դնա, զայս արարից ձեզ, առէք կերակուր եւ փութով երթայք առ հայրն ձեր, եթէ ճշմարիտ էք, եւ զեղբայրն ձեր զոր սիրէք փոքրիկ ամէք այսր, եւ այսպէս հաւատացից :

Եւ առեալ ցորեն⁴¹ զնացին տրամութեամբ առ հայրն իւրեանց յերկի- րին Քանանու, եւ պատմեցին նմա զչար պատահումն, եւ զպատասխանիւն ցասմամբ ասն, Եգիպտոսի տեսուն : Եւ յոյժ տրամեցաւ ի վերա բանիցս ախո- ցիկ, ասաց Հեծութեամբ. զի՞ զայս գործեցէք, ընդէ՞ր բնաւ ասացէք⁴² Եգիպ- տոսի տեսուն, եթէ այլ եղբայր ունիմք սոտ, եւ նոքա ասեն ինքն եհարց զաղղս մեր, ամենայն քննութեամբ : Եւ ասէ Յակոբ. մեռայց առաւել քան եթէ դիեն. իամէն առնուք ի զրկաց իմոց :

Եւ սովոյն պնդելոյ պատասխանի ետ նոցա, եւ միայն անդաւակեցաւ ի Հոսբուէլ, եւ յիմոց սիրելեաց, զի որպէս ասէր յիմ ի վերա⁴³ կատարեցաւ այս ամենայն յանկարծաւրէն, յարուցեալ առէք ընծայս ի ձեռս ձեր, եւ զեղ- բայրս ձեր եւ երթայք ի միասին : Եւ եկին ի միասին յԵգիպտոս երկիւղիւ մե- ծաւ եւ երկիր պոպին ամենեքեան առաջի Յովսէփա :

Ո Ի Թ Վ Ա Հ Ա Ն Գ Ի

Իսկ իբրեւ ետես Յովսէփ զԲենիամին զեղբայրն իւր՝ մերձ կացեալ երկիւղիւ եւ զողմամբ, խոտիցան աղիք իւր վասն նորա յոյժ, եւ խնդրէր զիրկս արկանել եւ համբուրել զեղբայր իւր եւ հարցանել ճշմարտութեամբ ե- թէ կենդանի է հայրն, եւ եթէ արդարեւ ունիցի զՅովսէփ ի սրտի : Եւ ոչ կա- րացեալ զիրկս արկանել մտանէ ի սենեկ, արտասուէ աներեւոյթարար¹, վասն զի ի ժամուն յայնմիկ յորժամ ետես զեղբարսն, վաղվազակի յիշեաց զզեղեց- կութիւնն² Յակոբա, եւ ասէ արտասուաւք՝ երանելիք են որ տեսանեն զսուրբ կերպարանս ձերութեան քո բարի, քանդի որպէս կարծեմ եւ ոչ բնաւ թապաւո-

35 Բ. կայցուք

36 Ա. լրտեսել

37 Բ. զերկիրս

38 Բ. մերոյ

39 Բ. չարի ի չար

40 Բ. չարի լաւ

41 Բ. ցորեն

42 Բ. ասացիք

43 Բ. ի յիմ վերայ

1 Բ. աներեւոյթարար

2 Բ. զզեղեցիւք իւն

բութիւնս եւ փառքս իմ համեմատեն³ քում ծերութեանդ, ու աստուածասէրդ:

Եւ կամէր հարցանել զԲենիամին⁴, եթէ արդարեւ ունիս զիս ի սրտի քում եւ ցանկաս ինձ որպէս եւ ես քեզ, զի յաղազս աշտորիկ հարկաւորեցան նենդութեամբ իջուցանել ընդ նոսա զքեզ եղբայր իմ, քանզի ոչ հաւատարի նոցա, որք ասէին եթէ ահա ունիմք եւս միւս եղբայր փոքրիկ, ալլ կարծէի եթէ նախանձու փարեալք սպանանէին զփոքրիկն քո սիրեցեալ Բենիամէնի, եւ առաւել արկի զհոգի քո ի հեծութիւն, զոր աւրինակ եւ զիս ինքեանք սպանին յաւժարութեամբ: Յաղազս աշտորիկ համեմարք եմք, առեցին զերկուսին զիս եւ զԲենիամին: Գիտեմ հայր, զի յոյժ տրտմել ես վասն մեր, եւ աւելի ցաւ է ծերութեանդ քում այժմ առաւել, ահա եւ ես սաստկադոյն վտանդիմ, զմտաւածելով զնեղութիւնդ քո, զի ոչ ոք այժմ ի մէնջ մերձ կա ծերութեանդ քում, եւ ոչ բաւական եղև քեզ սուղն առաջին վասն իմ, ալլ միւս եւս յաւելաւ քեզ, հայր, եւ եմ պատճառք⁵ քում լալոյտ, եւ հեծութեանդ, զի յանդգնութեամբ զործեցի իջուցանել աշտորիկ Բենիամին, զի համբուն⁶ զքէն հարկեցոյց ինձ զործել զայս, կամեցել⁷ ինձ ուսանել եթէ ճշմարտապէս հայր իմ կաս, ու Եւստի ինձ տեսանիլ զսուրբ կերպադրութիւնդ քո, եւ յաղհնալ հրեշտակական երեսօտքդ: Եւ լացել⁸ աշնուհետեւ բաւականարար ի սենեկի յաներևոյթս, լուսացէ զերեսս ելանէ լրջաբար, եւ հրամայէ զամենիսին զնոսա ի տուն ածել, որպէս զի ճաշակից Յովսեփա լինել:

Արդ լուարուք եղբարք զիմաստութիւնն Յովսեփա, զերդ⁹ զամենուսս առնյալտարար յերկիրդն զնոսա ածէ, վասն զի մի մի իւրաքանչիւր բազմել հըրամեց¹⁰ ըստ առնուան կարգաւորապէս էր իւրաքանչիւր ոք էր¹¹ ըմբել ի Յովսեփա այս բաժակ արծաթի, զոր ունէր, զնէ¹² զըմբելին ի ձախոյ ձեռին, եւ հարկանէ մատամբն աջոյ, եւ զըմբելին հարել¹³ հնչումն մեծ արձակէր ի լսելիս ամենեցուն որք ի տանն էին: Իսկ ապա հրամայել միանգամ ասաց ամենեցուն առ[դ]րանիկ Ռորէն, զա առաջինն ն[ա]տցի ըստ պատուի, եւ զարձեալ հարեալ¹⁴ եցոյց զանուն երկրորդին ասելով, այս Սիմեոն ծնել¹⁵ ըստ զման, եւ հարեալ զարձեալ երրորդ անգամ հրամայեց բազմել Ղեւէ¹⁶, ասէ ըստ կարծի որ ծնան պատմեցի, այսպէս զամենիսեան¹⁷ բազմեցոյց ըստ անունն եւ ըստ կարգի, եւ կացուցանէ զնոսա ի զարմանս աշտորիկ, եւ արկանէր զողորմն ի սիրտս ամենեցուն միանգամայն, որպէս զի զմտաւ ածել ամենեցուն, եթէ ինքն¹⁸ զամենայնն զիտէ, մի գուցէ բաժակաս հարցանել զիտէ, զոր մեք յառաջադոյն ստուգութեամբ ասացաք ի չար զազանէ զՅովսէփ սպանել, ալեկոծել¹⁹ ի խորհուրդս վասն աշտորիկ, եւ զի զկարծիս զաշտորիկ, ի սրտիցն նոցա բարձցէ, յորմէ²⁰ սեղանոյն մասունս տա եղբարցն, Բենիամէնի տասն մասն

3 Ա. համեմատեն

4 Բ. զԲենիամինի

5 Բ. պատճառ

6 Բ. համբուն

7 Բ. կամեցեալ

8 Բ. լացեալ

9 Բ. զիարդ

10 Բ. հրամայեաց

11 Բ. ոք է

12 Բ. զնէր

13 Բ. հարեալ

14 Բ. չունի՝ հարեալ

15 Բ. նման ծնեալ

16 Բ. երամայեաց բազմել Ղեւեայ

17 Բ. զամենեկեան

18 Բ. մտաւ տծեալ ամենեցուն Բ. ինքնի

19 Բ. սպանեալ, ալեկոծեալ

20 Բ. եւ յորմէ

տելի քան դայրոցն տա զմասնն, աւրինակ մին զայս առնէ Յովսէփի եղբարցն, ի բաժակէ՝²¹ [Բ. 1925 այսպէս կը մնայ Իւրի: Թ. 1934 կը շարունակուի]:

Յուցանէ ճանաչել զանուանս, զի առաւել մեղադրութիւն գործեսցէ ամենեցուն, որ զի դայսպիսի զանօթս որ զողացան: Եւ յետ այսորիկ Հրամայեաց իւրում ամենապետին տալ նոցա ցորեան յա(յ)գումն առանց զնոյ եւ զնել ի քրձին Բենիամինի զմօպելին, եւ մօղմօղակի արձակել զնոսա զամենեսեան ուրախութեամբ:

Եւ իբրեւ հեռացան փոքր մի ի թէն խնդութեամբ, եհա նոցա ընթացիւ ամենապետն Յովսեփայ, ծանրաբանէր ասելոյ եւ թշնամանելոյ, զողս կոչելոյ եւ պատուոց անարժանս եղեալ: Իսկ նոքա ասէին այսպէս. եւ յառաջնումն զարժաթն զոր զտար ի քուրձան բերաք տեսուն քում. իսկ զբաժակն զողանայ՝ ք ի տանէ տեսուն քում: Իսկ նա ասէ ցնոսա. քուրձան ընկեցէք զի տեսից: Եւ փութացեալ ամենեցուն իջուցին յիշոցն, եւ զտաւ ի քրձին Բենիամինի բաժակ ըմպելին:

Իսկ նոցա տեսեալ պատուեցին զհանդերձս իւրեանց եւ սկսան իւրաքանչիւր ոք բազում սաստկութեամբ մեղադրել Բենիամինի, թշնամանելոյ զհռաքէլ, միանգամայն զՅովսէփի, հանդերձ մարքն եւ եղբարքն, զուք ասէ զայթաղութիւն եղբուրք. հօր մերում եւ տանն Յակոբրա, երկոքին որոյք Հռաքէլի: Քանզի Յովսէփի ի վերայ մեր թողաւորել կամեցաւ, մասն որոյ եւ զազանակուր եղեւ, ընդ որում եւ արժանի իսկ էր: Եւ զու եղբայր Յովսեփայ նմանաբար եղելոյ, զամենեսեան զմեզ յանտանելի թշնամանս եւ ի նեղութիւնս արկէք, ոչ որդիք էք Հռաքէլայ, որ զողացաւ զկուռն ի հօրէն իւրմէ: Եւ նա ասէր ոչ զողացայ:

Եւ ամբարձեալ զձայնն իւր Բենիամինի ասելոյ, եւ հեծութեամբ հաւանեցուցանելոյ զիւրաքանչիւր ոք. ահա զու զիտես, որ իմոյ հօր Աստուածդ ես, որ ասէր զՀռաքէլ, որպէս եւ կամեցար եւ գիտացեր, զարձեալ զմահ Յովսեփայ ամենալաւին, որ հաստատեցեր զՅակոբի ի բաժանմանն Յովսեփայ, եւ անմխիթաբել զնա անտեսաբար, ըստ որում զիտես եւ տեսանես զսիրտս ամենեցուն, ե քննես զաւուրս, զի ես ոչ զողացայ զըմպելին զայդ, որպէս ասեսդ: Եւ ոչ զարձեալ մտածութիւն ինչ առի զգմանէ, այսպէս տեսից զսուրբ ախան Յակոբրայ, եւ համբուրեցից զծունկան նորա խնդութեամբ. ոչ զողացայ զբաժակդ զայդ: Վա՛ր ինձ, վա՛ր ինձ, Հռաքուէլ, զի եղեւ, յորդուց քոց, Յովսէփ, որպէս ասացին ի զազանէ ծախեցաւ. ահա զարձեալ եւս մայր յանկարծօրէ զող եղայ, եւ յաւտար երկիր ըմբոնեցայ ի ծառայութիւն:

Յովսէփի յանապատի զազանակուր եղեւ լինելոյ աղաղակեաց զի փրկեացի, եւ ոչ զոք եղիտ: Ահա զարձեալ եւս մայր իմ՝ զեղբարս իմ աղաչեմ եւ հաւանեցուցանեմ, եւ ոչ ոք է որ լսէ կամ հաւատայ որդւոյ քում:

Եւ զարձան ի քաղաքն առ Յովսէփի, ոչ ունելոյ ամէնեւին պատասխանի յաղազս այսորիկ: Ասէ ցնոսա Յովսէփի զայրացմամբ՝ Հնչէրն եւ ասէր. Այս է հատուցումն իմոյ բարեբարութեանն, մասն այսորիկ եւ պատուեցի զձեզ, եւ զուք զըմբելին զողացայք, որոյ հ(ա)մայէի, եւ ոչ այսորիկ են, քանզի մաղադոյն ասացի ձեզ եթէ ոչ էք խաղաղականք այլ յրտեսք, բայց արդ ալժմ եւ զայս գործեմ մասն երկիրդին Աստուծոյ, որ զողացայք զբաժակն իմ ի ծառայութիւն եղիցի ինձ:

Եւ մատուցեալ Յուդայի ի ծունր իջեալ եւ աղաչէր այսպէս. մի՛ աւրացես տէր իմ եւ խօսեցայց. զու զմեզ հարցեր զմատայս քո, ո՛ր տէր, ա-

21 Բ. եւ ի բաժակէն

սկսով՝ եթէ ունի՞ր հայր կամ եղբայր՝ այլ եւ մեք ծառայքս քո ասացաք՝ եթէ մեր հայր ծառայ քո է, եւ ունի երկուս որդիս, առաւել քան զամենեւեան սիրէ զնոսա: Զմինն զազան ետպան ի լերինն՝ եւ հայրն նորա սգայ՝ զնա զամենայն աւր մինչեւ ցոյժմ, միանգամ ասել եթէ երկիր սգայ ի ձեռն նորա, իսկ զմիւսն ընդ ինքն ունի հաւապող վասն առաջնոյն, բայց սակայն որպէս եւ հրամայեցեր՝ ածաք զնա, եւ ի դժնէայ անիրաւութիւն անկաք ծառայքս քո: Եւ այց այժմ զայս աղաչեմ, տէր իմ, զի եղէց եւ ես ծառայ ընդ մանկանդ՝ տեառն իմում աստ, միայն մանուկդ էյցէ ընդ եղբորս իւր առ հայր իւր, զի երաշխաւորութեամբ առի զմանուկդ ի հօրէն. եւ երանել ոչ կարեմ առանց դորա առ հայրն, զի տեսից զմահ հօր իմոյ:

Եւ իբրեւ լուաւ Յովսէփի զոգորմական բանս, եւ տեսանելով զամենեւեան ամօթով առաջի կացեալս, եւ տեսեալ պատառեալ պատմուհանն Բենիա-մենի, եւ լալով ամենեցուն անկեալ ի ծունկս մերձակայիցն, զի նոքա աղաչեացեն զՅովսէփի վասն նորա, որպէս զի թողացուցէ նմա երանել ընդ եղբարորն. եւ առաւել խոռովեցաւ զուրթ աղեաց իւրոց, եւ զօրաւոր ձայնիւ զոչեաց եւ ասէ. Տեղի տայցեն ամենեքեան որ աստ մերձ կայցին: Եւ վաղվաղակի ելին ամենեքեան արտաքս: Եւ բարձրացուցեալ Յովսէփի զբարբառ իւր հանդերձ լալով երբայեցերէն խօսիւք եւ ասէ ցնոսա յայտնապէս. Ես եմ Յովսէփի եղբայրն ձեր. ոչ կերայ(ց) ի զազանէ որպէս զուր ասէք, ես եմ որ ձէնջ ընկայ ի դուրն, ես եմ որ ձէնջ վաճառեցայ իսմայէլացւոցն, որ եւ վարէի զձեր զամէնեցուն ոտիւք, յորժամ ոչ ոք ի ձէնջ ոգորմեցաւ ինձ ի նեղութեան իմում, այլ իբրեւ զանդուրթ զազանք վայրենացայք անդ, բայց սակայն, եղբարք իմ, մի՛ զարհուրիք, եւ մի ոք ի ձէնջ երկիցէ, այլ առաւել ուրախ լերուք դուք եւ ես: Եւ զոր աւրինակ ասացէք հաւր մերում զառաջինն վասն իմ՝ եթէ ի լերինն ի զազանէ սպանաւ, ի նմին զարձեալ ելէք պատմեցէք Յակոբայ խնդութեամբ ասելով այսպէս. եթէ կենդանի է Յովսէփի՝ որդին քո, եւ ինքն նստի թաղաւորակաւ ձեռով զաւազան ունելով զթագաւորին երկրին եղիպտացւոց:

Եւ եղելոյ բարբառոյն Յովսէփայ առ եղբարսն իւր՝ յիմարեցան իբրեւ զմեռեալս յերկիրդէն, եւ ի զոգման եղեալ զմտաւ ամեկով յինքեանս, եթէ որչափ առ նմա արարին անողորմածութիւն, զի արկին ի գուրն, եւ յետ այնորիկ վաճառեցին: Եւ մատուցեալ Յովսէփի՝ շառուիղն Յակոբայ, համբուրէր զիրաքանչիւր ոք՝ յեղբարց իւրոց մեծաւ անձկաւ եւ անշարարոյ բարուք, որպէս եւ վայել էր, եւ հեղութեամբ եւ առատութեամբ, ուրախացոյց զնոսա պարզեւօք եւ պատուով, եւ խնդութեամբ մեծաւ առաքեաց զամենեւեանս առ Յակոբի ասելով այսպէս. մի՛ ամէնեւին կոռուելով ի ճանապարհին այլ առաւել փութով երթայք առ հայրն եւ ասացէք. Այսպէս ասէ որդին քո Յովսէփի, արար զիս Ած. թագաւոր Եղիպտոսի, եկ հայր ուրախութեամբ սրտիւ, զի տեսից հրէշտակական դժմ ծերութեան քո. ո՛վ աստուածասէրդ:

Եւ եկեալ փութով պատմեցին զբանս Յովսէփայ որչափ ասաց նոցա: Եւ լուեալ Յակոբայ զանունն Յովսէփայ յեղիպտոս, յոգոց եհան եւ լալով ասէ ցնոսա հեծութեամբ. վասն է՞ր խոռովեցուցանէք զհօգի իմ, զի զարձեալ տեսից զկերպարանս Յովսէփայ ամենալաւին եւ զտրտութիւն իմ առ փոքր մի չիջուցանել ի սրտէ իմմէ, այժմ կամիք վերստին բորբոքել:

Եւ մատուցեալ Բենիամէնի ասէ ցնա, համբուրելով, եթէ ճամարիտ են բանքս այսօքիկ. եւ եցոյց նմա միանգամայն զպարզեան Յովսէփայ, եւ վաղվաղակի հաւատաց Բենիամէնի: Եւ յարուցեալ ամենայն տամբն փութով

և ևս բախտութեամբ, իջին յեղիպոտոս առ Յովսէփ որդին իւր, և արտաքոյ քաղաքին պատահեաց Յովսէփի Հօր իւրում Յակովբայ բազում վաշեկշուքեամբ կառաց և և իշխանութեամբ և զօրաց փարաւոնի:

Եւ իբրեւ ետես Յակովբ զորդին իւր, անկաւ (անկաւ) անշափ անձկով ի վերայ պարանոցին Յովսէփայ ասելով այսպէս. Մեռայց արդ, որովհետեւ տեսի զերեսս քո, որդեակ իմ, վասնզի առատապարգեւն ԱՅ. զփառաւորիչս իւր փառաւորէ յաստիս և ի հանդերձելումն, և ևմա փառք յաւիտեանս յաւիտենից Ամէն:

Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ

(Շար. 2 եւ վերջ)